Հավելված 6
«ԱՐԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/7 » ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

# N ԱՐԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-1

ք. Արթիկ << 03 >> փետրվարի 2021 թ.

<<ԱՐԹԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բաբիկ Մարտիրոսյանի, որը գործում է <<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ Տիգրան Ավետիսյանը, ի դեմս տնօրեն Տիգրան Ավետիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

Сканировано с CamScanner

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի ի
ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **8182866 /ութ միլիոն մեկ հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր վաթսունվեց/** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև ________ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների

---

| :

ման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում:[19]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[19] [illegible]

[20] [illegible] 365 օրացուցային [illegible]

[21] Պայմանագիրը [illegible] է «Գնումների [illegible]» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ [illegible]

Сканировано с CamScanner

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդ, նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կողմերի միջև Համաձայնագրի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[22] [illegible]

Сканировано с CamScanner

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Сканировано с CamScanner

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**
<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ
Բաղրամյան 2
Բանկ՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ Արթիկ
մասնաճյուղ
Հ/Հ 2470400339430010
ՀՎՀՀ 06107489

Տնօրեն՝ Բ. Մարտիրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
ԱՁ Տիգրան Ավետիսյան

ՀՀ ք. Արթիկ Անկախության 21/50
ՀՎՀՀ 57306339
Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ
h/h 2470411568340000

Տնօրեն՝ Տ. Ավետիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Сканировано с CamScanner

Հավելված N 1
«03» փետրվարի 2021թ. կնքված
ԱՐԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-1 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1. | 33661153/501 | Դեքսամեթազոն 4մգ/մլ, 1մլ | ԿՐԿԱ | Դեքսամեթազոնdexamethasoneլուծույթներարկման 4մգ/մլ, 1մլ | սրվակ | 150 | 75000 | 500 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | 2021 թվականին ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո`1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքումյուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը |
| 2. | 33661153/502 | Դեքսամեթազոն կաթիլ 1մգ/մլ, 5 մլ | ՌՈՄՖԱՐՄ | Դեքսամեթազոն dexamethasone ակնակաթիլներ 1մգ/մլ /1 22հկում ոչ պակաս քան 5 մլ, ոչավելի քան 10 մլ | 22հկ | 850 | 25500 | 30 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 3. | 33642230/501 | Լևոթիրօքսինի նատրիում 100մկգ, | ՏԱԿԵԴԱ | Լևոթիրօքսին դեղահատ levothyroxine 100մկգ | դեղահատ | 19 | 95004 | 5000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 4. | 33651134/501 | Ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ) 3մգ/մլ, 10 մլ , պլաստիկե սրվակ | ԼԻԿՎՈՐ | Ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ) 3մգ/մլ, 10 մլ , պլաստիկե սրվակ | սրվակ | 750 | 15000 | 20 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 5. | 33661156/501 | Թիմոլոլ (թիմոլոլի մալեատ) 5մգ/մլ, 5 մլ, | ՌՈՄՖԱՐՄ | Թիմոլոլ timolol ակնակաթիլներ 5մգ/մլ, /1 22հկում ոչ պակաս քան 5մլ, ոչավելի, քան 10 մլ/ | 22հկ | 690 | 20700 | 30 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 6. | 33611100/501 | Օմեպրազոլ 20մգ | ԲԱՐԻՍՈՎ | Օմեպրազոլ omeprazole, դեղապատիճ , 20մգ | դեղահատ | 20 | 30000 | 1500 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7. | 33611170/501 | Դրոտավերինի հիդրոքլորիդ, 40մգ | ՍԱՆՈՖԻ | Դրոտավերին drotaverine դեղահատ 40մգ | դեղահատ | 28 | 56004 | 2000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում: |
| 8. | 33661121/501 | Ացետիլսալիցիլաթթու 500մգ | ԲԱՐԻՍՈՎ | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylicacidդեղահատ 500մգ | դեղահատ | 10 | 5004 | 500 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 9. | 33631290/501 | Իբուպրոֆեն 400մգ | ԽԵՄՈՖԱՐՄ | Իբուպրոֆեն ibuprofen դեղահատ 400մգ | դեղահատ | 40 | 80004 | 2000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 10. | 33661122/501 | Պարացետամոլ 500 մգ | ՖԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ | Պարացետամոլ 500 մգ | դեղահատ | 10 | 10002 | 1000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 11. | 33671114/501 | Ամինոֆիլին 150մգ | ՖԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ | Ամինոֆիլին, Aminophylline դեղահատ 150մգ | դեղահատ | 7 | 4200 | 600 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 12. | 33671114/502 | Ամինոֆիլին լուծույթ ներարկման 24մգ/մլ,5մլ | ԵՐԵՎԱՆՖԱՐՄ | Ամինոֆիլին, Aminophylline լուծույթ ներարկման 24մգ/մլ, 5մլ | սրվակ | 75 | 15000 | 200 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 13. | 33651111/501 | Ամոքսիցիլին 500մգ | ԻՆԴԻԱ | Ամոքսիցիլին amoxicillin դեղապատիճ 500մգ | դեղահատ | 55 | 27504 | 500 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 14. | 33621580/501 | Հիդրոքլորոթիազիդ 25մգ | ԲԱՐԻՍՈՎ | Հիդրոքլորոթիազիդ hydrochlorothiazide, դեղահատ, 25մգ | դեղահատ | 20 | 4002 | 200 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 15. | 33671113/501 | Սալբուտամոլ (սալբուտամոլի սուլֆատ) 100մկգ/դեղաչափ, 200 | ԳԼԱԿՍՈ | Սալբուտամոլ (սալբուտամոլի սուլֆատ) 100մկգ/դեղաչափ, 200 դեղաչափ, | հատ | 2440 | 244002 | 100 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված | |



Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | դեղաչափ, դեղաչափիչ մխոցով պլյումինե տարա | | դեղաչափիչ մխոցով պլյումինե տարա | | | | | | քանակի | |
| 16. | 3362171 0/501 | Ատենոլոլ 50մգ | ԲԱՐԻՍՈՎ | Ատենոլոլ, atenolol դեղահատ 50 մգ | դեղահատ | 6 | 3600 | 600 | Դեղատա ն հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմս ում նշված քանակի | |
| 17. | 3362169 0/501 | Կարվեդիլոլ 12,5մգ | ԳՐԻՆԴԵՔՍ | Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 12,5մգ, | դեղահատ | 176 | 528000 | 3000 | Դեղատա ն հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմս ում նշված քանակի | |
| 18. | 3362169 0/502 | Կարվեդիլոլ 6,25մգ | ԳՐԻՆԴԵՔՍ | Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 6,25մգ, | դեղահատ | 114 | 57000 | 500 | Դեղատա ն հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմս ում նշված քանակի | |
| 19. | 3369120 3/501 | Լոզարտան 100մգ | ԿՐԿԱ | Լոզարտան losartan դեղահատ 100մգ | դեղահատ | 125 | 75000 | 600 | Դեղատա ն հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմս ում նշված քանակի | |
| 20. | 3369120 3/502 | Լոզարտան 50մգ | ԿՐԿԱ | Լոզարտան losartan դեղահատ 50մգ | դեղահատ | 88 | 44004 | 500 | Դեղատա ն հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմս ում նշված քանակի | |
| 21. | 3362175 0/501 | Նիֆեդիպին 10մգ | ԼԵԿԽԻՄ | *Նիֆեդիպին Nifedipine դեղահատ 10 մգ* | դեղահատ | 22 | 11004 | 500 | Դեղատա ն հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմս ում նշված քանակի | |
| 22. | 3369114 0/501 | Ացետիլցիստեին 200 մգ | ԳԼԱԿՍՈ | Ացետիլցիստեին, Acetylcysteine 200մգ, դեղահատ | դեղահատ | 165 | 33000 | 200 | Դեղատա ն հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմս ում նշված քանակի | |
| 23. | 3363131 0/501 | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) 50մգ | ԽԵՄՈՖԱՐՄ | Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 50մգ | դեղահատ | 27 | 13500 | 500 | Դեղատա ն հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմս ում նշված քանակի | |
| 24. | 3362152 | Էնալապրիլ (Էնալապրիլի | ԽԵՄՈՖԱՐՄ | Էնալապրիլ enalapril | դեղահատ | 50 | 50004 | 1000 | Դեղատա | Յուրաքանչ | |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 0/501 | մալեատ) 10 մգ | | դեղահատ 10 մգ | | | | | ն հասցեն | յուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 25. | 3362152 0/502 | Էնալապրիլ (Էնալապրիլի մալեատ) 20 մգ | ԽԵՄՈՖԱՐՄ | Էնալապրիլ enalapril դեղահատ 20 մգ | դեղահատ | 64 | 128004 | 2000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 26. | 3361135 0/501 | Ասկորբինաթթու 500մգ | ԱՍՏԵՐԻԱ | Ասկորբինաթթու, ascorbic acid դեղահատ 500մգ | դեղահատ | 60 | 30000 | 500 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 27. | 3362151 0/501 | Կապտոպրիլ 25մգ | ԿՐԿԱ | Կապտոպրիլ captopril դեղահատ 25մգ | դեղահատ | 38 | 11400 | 300 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 28. | 3364222 0/501 | Մեթիլպրեդնիզոլոն 4մգ | ՕՐԻՈՆ | Մեթիլպրեդնիզոլոն methylprednisolone դեղահատ 4մգ | դեղահատ | 79 | 47400 | 600 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 29. | 3362121 0/501 | Երկաթի (III) հիդրօքսիդի և պոլիմալտոզի համալիր 100մգ | ԼԵԿ | Երկաթի (III) հիդրօքսիդ պոլիմալտոզով iron (III) hydroxide with polymaltose 100մգ | դեղահատ | 115 | 34500 | 300 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 30. | 3362159 0/501 | Ֆուրոսեմիդ 40մգ | ԲԱՐԻՍՈՎ | Ֆուրոսեմիդ furosemide, դեղահատ 40մգ | դեղահատ | 7 | 7008 | 1000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 31. | 3362142 0/501 | Ատորվաստատին 20 մգ | ԿՐԿԱ | Ատորվաստատին atorvastatin դեղահատ 20մգ | դեղահատ | 127 | 126990 | 1000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 32. | 3362142 0/502 | Ատորվաստատին 40 մգ | ԿՐԿԱ | Ատորվաստատին atorvastatin դեղահատ 40մգ | դեղահատ | 286 | 572004 | 2000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33. | 3362153 0/501 | Պերինդոպրիլ (պերինդոպրիլ արգինին) + Ինդապամիդ 10մգ+2,5մգ | ՍԵՐՎԻԵ | Պերինդոպրիլ (պերինդոպրիլ արգինին) + Ինդապամիդ 10մգ+2,5մգ | դեղահատ | 260 | 780000 | 3000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 34. | 3362153 0/502 | Պերինդոպրիլ (պերինդոպրիլ էրբումին) + Ինդապամիդ 8մգ+2,5մգ | ԿՐԿԱ | Պերինդոպրիլ (պերինդոպրիլ էրբումին) + Ինդապամիդ 8մգ+2,5մգ | դեղահատ | 180 | 360000 | 2000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 35. | 3362153 0/503 | Պերինդոպրիլ (պերինդոպրիլ էրբումին) + Ինդապամիդ 4մգ+1,25մգ | ԿՐԿԱ | Պերինդոպրիլ (պերինդոպրիլ էրբումին) + Ինդապամիդ 4մգ+1,25մգ | դեղահատ | 150 | 300000 | 2000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 36. | 3362176 4/501 | Պերինդոպրիլ + Ինդապամիդ + Ամլոդիպին 8մգ+2.5մգ+10մգ | ԿՐԿԱ | Պերինդոպրիլ + Ինդապամիդ + Ամլոդիպին 8մգ+2.5մգ+10մգ | դեղահատ | 250 | 750000 | 3000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 37. | 3362176 4/502 | Պերինդոպրիլ + Ինդապամիդ + Ամլոդիպին 8մգ+2.5մգ+5մգ | ԿՐԿԱ | Պերինդոպրիլ + Ինդապամիդ + Ամլոդիպին 8մգ+2.5մգ+5մգ | դեղահատ | 250 | 750000 | 3000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 38. | 3366112 1/502 | Ացետիլսալիցիլաթթու 75 մգ | ՏԱԿԵԴԱ | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylicacidդեղահատ 75մգ | դեղահատ | 25 | 125004 | 5000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 39. | 3362176 9/501 | Լոզարտան + Հիդրոքլորոթիազիդ 100մգ + 25 մգ | ԿՐԿԱ | Լոզարտան , հիդրոքլորոթիազիդ losartan , hydrochlorothiazideդեղահատ 100մգ+25մգ | դեղահատ | 165 | 495000 | 3000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 40. | 3366113 3/501 | Կարբիդոպա + լևոդոպա 25մգ+250մգ | ՍԱՆԴՈՍ | Կարբիդոպա, լևոդոպաcarbidopa, levodopa, դեղահատ, 25մգ+250մգ | դեղահատ | 250 | 125004 | 500 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 41. | 3367111 8/501 | Ցիպրոֆլոքսացին + Դեքսամեթազոն ականակաթիլներ, 3մգ/մլ + 1 մգ/մլ | ԼԻԿՖՈՐ | Ցիպրոֆլոքսացին + Դեքսամեթազոն ականակաթիլներ, 3մգ/մլ + 1 մգ/մլ | սրվակ | 2300 | 115002 | 50 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված | |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | քանակի | |
| 42. | 3367112 5/501 | Ամբրոքսոլ 30 մգ | ԼԵԿԽԻՄ | Ամբրօքսոլ ambroxol դեղահատ 30մգ | դեղահատ | 29 | 14502 | 500 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 43. | 3363117 0/501 | Տետրացիկլին քսուկ 10մգ/գ 3գ ալյումինե պարկուճ | ԱՐՓԻՄԵԴ | Տետրացիկլին tetracycline, ակնաքսուք, 10մգ/գ ալյումինե պարկուճ /1 պարկուճում քսուքը ոչ պակաս քան 3գրամ, ոչ ավելի քան 5գրամ/ | հատ | 800 | 24000 | 30 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 44. | 3362111 0/501 | Վարֆարին (վարֆարին նատրիում) 2.5մգ | ՕՐԻՈՆ | Վարֆարին warfarin , դեղահատ, 2,5մգ | դեղահատ | 24 | 60000 | 2500 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 45. | 3367111 3/502 | Սալբուտամոլ 4մգ | ԱՐՓԻՄԵԴ | Սալբուտամոլ salbutamol դեղահատ 4 մգ | դեղահատ | 80 | 40002 | 500 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 46. | 3362114 0/504 | Կլոպիդոգրել 75մգ | ՄԱԿԵԴՈՆԻԱ | Կլոպիդոգրել Clopidogrel 75 մգ | դեղահատ | 310 | 620004 | 2000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 47. | 3361136 0/501 | Խոլեկալցիֆերոլ 1000 ՄՄ | ԱՄՆ | Խոլեկալցիֆերոլ cholecalciferol (1 000ՄՄ) | դեղահատ | 165 | 495000 | 3000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 48. | 3369123 1/501 | կալցիում(կալցիում կարբոնատ), խոլեկալցիֆերոլ | ԱՐՓԻՄԵԴ | Կալցիում /կալցիում կարբոնատ/, խոլեկալցիֆերոլ 500մգ+200ՄՄ | դեղահատ | 50 | 150000 | 3000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |
| 49. | 3369120 0/501 | Սենոզիդներ 13,5մգ | ԻՆԴԻԱ | Սենոզիդներ Ca sennosides Ca դեղահատ 13,5մգ | դեղահատ | 250 | 500004 | 2000 | Դեղատան հասցեն | Յուրաքանչյուր անգամ համաձայն դեղատոմսում նշված քանակի | |

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի,

*ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:*

*** Եթե իրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*
**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**
***Մատակարարվող ապրանքները պետք է լինեն չօգտագործված:**
****Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան: Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:***
**ա.** 2,5 տարվանից ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանելիության ժամկետ:
**բ.** մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը:
**գ.**առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ<br>Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ Բաղրամյան 2<br>Բանկ՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ Արթիկ մասնաճյուղ<br>Հ/Հ 2470400339430010<br>ՀՎՀՀ 06107489<br>Տնօրեն՝ Բ. Մարտիրոսյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | ԱՁ Տիգրան Ավետիսյան<br>ՀՀ ք. Արթիկ Անկախության 21/50<br>ՀՎՀՀ 57306339<br>Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ<br>հ/հ 2470411568340000<br>Տնօրեն՝ Տ. Ավետիսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Сканировано с CamScanner

*Հավելված N 2*
*«03» փետրվարի 2021թ. կնքված*
*ԱՐԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/7-1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| | |
|---|---|
| **Վճարման ժամկետը /վճարման ժամանակացույց** | Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա: |

**ԳՆՈՐԴ**

<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ
Բաղրամյան 2
Բանկ՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ Արթիկ
մասնաճյուղ
Հ/Հ 2470400339430010
ՀՎՀՀ 06107489
Տնօրեն՝ Բ. Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
ԱՁ Տիգրան Ավետիսյան

ՀՀ ք. Արթիկ Անկախության 21/50
ՀՎՀՀ 57306339
Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ
հ/հ 2470411568340000

Տնօրեն՝ Տ. Ավետիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Сканировано с CamScanner